ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

«22» Հոկտեմբերի 2017թ. № 590-Հ.

ՀՐԱՄԱՆ

«ԷՆ ԱՈՒԴԻՏ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՈՐՊԵՍ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ԷՆ ԱՈՒԴԻՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 2017 թվականի նոյեմբերի 2-ին առձեռն ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված 2017 թվականի երրորդ եռամսյակի հաշվետվությունը և համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 2017 թվականի նոյեմբերի 10-ին Ընկերության նկատմամբ թիվ 03/24-2/20588-17 գրությամբ հարուցված վարչական վարույթի՝ Ընկերությունը խախտել է «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի «զ» կետի պահանջը՝ Ընկերությունը ՀՀ կառավարության 2012 թվականի հունվարի 26-ի թիվ 82-Ն որոշմամբ հաստատված աուդիտ իրականացնող անձանց կողմից ներկայացվող եռամսյակային հաշվետվությունը չի ներկայացրել տվյալ եռամսյակին հաջորդող 30 օրվա ընթացքում (այսինքն՝ մինչև 2017 թվականի հոկտեմբերի 30-ը):

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի 31.2-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» կետով ու ՀՀ կառավարության 2008 թվականի մայիսի 15-ի թիվ 503-Ն որոշմամբ հաստատված ՀՀ ֆինանսների նախարարության կանոնադրության 11-րդ կետի 4-րդ ենթակետի դրույթներով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի «զ» կետի պահանջը խախտելու համար «ԷՆ ԱՈՒԴԻՏ» սահմանափակ

պատասխանատվությամբ ընկերության նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել նախազգուշացում:

2. Սույն հրամանը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում կամ ՀՀ վարչական դատարան:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով՝ իրազեկելուն հաջորդող օրվանից:

Վ. ԱՐԱՄՅԱՆ